

ՀՀ Գրեթուօրհանրի ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՆԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՐԻԹՅԱՆ ԻԳԻԹ ԳԱՐԵԳԻՆԻ

Ք Ա Ն Ա Հ Ա Տ - Գ Լ Ա Ձ Ո Ր

/Տեղադրութիւնը, պեղումները, վիճագիր
արժանագրութիւնները/

Է-00.03. Հնագիտութիւն մասնագիտութեամբ.

Պատմական գիտութիւնների դոկտորի գիտական
աստիճանի հալցման առեւտրութեան

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երեւան - 1996

Աշխատանքը պատրաստվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական լրագրողներ -

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Առաքելյան Բարդին Նիկոլայի
պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Մուրադյան Պարույր Սամբրեի
պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գրիգորյան Գրիգոր Սեպրուպի

Առաջատար կազմակերպությունը՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտ

Պաշտպանությունը կկատարվի 1996 թ. *25, 26, 27* . *d-13⁰⁰*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին առընթեր գործող
դոկտորի գիտական աստիճաններ շնորհող /007/ մասնագիտական խորհրդում
/հասցեն՝ Երևան-25, Չարենցի 15/:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է *21, 22, 23* . *1996 թ.*

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, պատմական գիտու-

թյունների թեկնածու՝ *[Signature]* Գ.Ս.Վարդումյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՓԱԳԻՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒՅՑԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջարկվող ատենախոսությունը նվիրված է միջնադարյան Հայաս-
տանի հոշակավոր գիտակրթական և մշակութային կենտրոններից մեկի՝
Գլաձորի համալսարանի տեղադրության մշակման հետ կապված կենտոտ
հարցերին, հնավայրի հնագիտական պեղումներին, հայտնաբերված նյութա-
կան մշակույթի ու վիճակի արժանապրությունների գիտական ուսումնա-
սիրությունը: Հայաստանի Գլաձորի քարձրագույն զբոսայգի կամ համալսարանի
մեծ համալսարան, նրա քարտեզագրության հեղինակության ու վստահին, հայ
պատմագրության և քանակագրության մեջ երկար ժամանակ վիճելի էին հա-
մալսարանի տեղադրության, հիմնադրման ու զործունեության հանգամանք-
ները: Տարբեր հեղինակների կողմից որոնվում և տեղադրվում էին, Երկ-
րորդ Աթենք պանծալի, զբոսադուր Պոռոյանների իշխանական տան ար-
քունքների բազմաթիվ վանական համալիրներից մեկում, որը հիմնավոր-
վում էր միայն զբոսայգի արքունիքներով: Հարցի լուծման համար անհրա-
ժեշտություն էր զգացվում իրականացնել հնագիտական հետազոտություն
և պարզաբանել խնդիրը:

Այդ նպատակով Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավա-
խումբը, հեղինակի գլխավորությամբ, 1969 թվին հետախուզական պեղում-
ներ է իրականացրել վաղ ժողովրդի տարբեր հնավայրերում: 1970 թվականից
սկսած սխտեմատիկ պեղումները կենտրոնացվեցին Երեզնիստի շրջանի
վերնաշեն գյուղից 5-6 կմ հարավ-արևելք գտնվող Թանահատի վանական
համալիրի տարածքում:

Թանահատի վանքը, որը սկզբնաղբյուրներում վկայված է 735 թվա-
կանից, հարտուել է մինչև 6 է դարի սկիզբը, խոշոր ներգրում կատարելով
միջնադարյան գիտական, կրթական և հոգևոր գանձարանը: Պեղումների շը-
նորհիվ ի հայտ են եղել 5-6 դարի բազիլիկ տաճար, Ը դարի մատուո-
ղամբարան, 68-69 դարերում կառուցված զավթիներ, սեղանատուն, տառե-
սական նշանակության շինություններ, բնակելի տներ՝ միաբնակության հա-
մար, պահեստ-հորեր, հարյուրից ավելի վիճակի արժանագրություններ
և այլն: Սիմվոլիկ, հայտնաբերվել են բազմաթիվ հուշակոթողներ՝ խաչ-
քարերի և տապանքարերի տեսքով, որոնց մի մասն ունի համապատասխան
հիշատակագրեր:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպա-
տակը Թանահատի վանական համալիրում իրականացված հնագիտական պեղում-

ների արդյունքների և մասնագրական աղբյուրների, ժամանակակիցների հիշատակագրությունների, նորագույն ժամանակների ուսումնասիրողների աշխատությունների հիման վրա հիմնավորել, որ Գլխավոր հոշակավոր համալսարանը գործել է վերոհիշյալ վանական համալիրի տարածքում:

Առեմախոսության հիմնական խնդիրներից մեկը Քանահատի վանքի պատմադարաբանական հուշարձանների ուսումնասիրությունն է և նրանց արժեքավորումը: Կարևորագույն խնդիր է պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդների գիտական ուսումնասիրությունը, նրանց նշանակության պարզաբանումը, համապատասխան արհեստների զարգացման մակարդակի բացահայտումը, բաղադրումը, համանման նյութերի հետ, դրանց թվագրումը և այլն: Խոսքը վերաբերում է առաջին հերթին, մեռադե առարկաներին /աշխատանքային գործիքներ, գեղեցիկ, առանձին օգտագործման առարկաներ/, քարե սարքերին և իրերին, խեցեղենի ողջ արտադրանքին /հասարակ, զաջազարդ, շնարակած, հախճապակի, ձիթամրազներ և ձիթամրոցներ/:

Գիտական մեծ նշանակություն ունի Քանահատի վանական համալիրի ժարտարաբանական հուշարձանների ողմերին փորագրված արձանագրությունների վերծանությունը, վերջիններիս միջոցով վանքի միաբանության պատմության հարցերի պարզաբանումը: Վիճակի արձանագրությունների քննությունը հնարավորություն է ընձեռում լուծելու վանքում իրականացված շինարարական և նորոգչական գործունեության հետ կապված բազմաթիվ հարցեր, քաղաքայինը այս խոշոր վանական միաբանության հոգևավոր, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտների հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ: Միաժամանակ դրանով պարզվում են վաղոց ծոր վանքի ավատական տների աչքի ընկնող գործիչների հետ առնչվող մի շարք հարցեր:

Աշխատանքի գիտական նորույթը: Առեմախոսության մեջ լուծված են Քանահատ-Գլխավորի վանական համալիրի պատմության հետ կապված բազմաթիվ խնդիրներ՝ վիճակագրության, ժարտարաբանության պատմության և նյութական մշակույթի ուսումնասիրման համակողմանի մոտեցումով: Մեկնարկային այս եղանակը հնարավորություն է ընձեռում կատարել պատմագիտական ճրջ-գրտումներ, թվագրման շտկումներ, վիճակագրական-բաղադրական գիտողություններ, լրացնել, ձխել կամ հաստատել զբաղվող աղբյուրների վկայությունները, բացահայտել նոր հանգամանքներ՝ կապված Գլխավոր տեղադրության հետ, հաստատել կամ վերանայել նախկինում ընդունված տեսակետները:

Աշխատանքի աղբյուրագիտական առաջը: Առաջարկվող առեմախոս-

ությունը ինքնին աղբյուրագիտական, հնագիտա-վիճակագրական քննությունների խարտիված զրչազիր, վիճակի և նյութական մշակույթի ուսումնասիրման հիմքերի վրա: Առեմախոսության շարագրման համար օգտվել ենք հայագիտության հիմնարար մի շարք աշխատություններից, որոնք նվիրված են հայոց բանասիրությանը, պատմությանը, մշակույթին /հիմնականում արհեստային արտադրության ընթացակարգում/ և վիճակի արձանագրություններին: Բնակահար, մեր ուշագրություն կենտրոնում եղել են միջնադարյան հայ պատկերների, ժամանակագրությունների հեղինակների, ձեռագիր մատյանների հիշատակարանների և մանր ժամանակագիրների թողած վկայությունները ԺԳ-ԺԴ դարերի Հայաստանի, մասնավորապես վաղոց ծորի պատմության, քաղաքական, տնտեսական ու մշակութային անցողիկների և Գլխավորի համալսարանի հետ կապված այլաբանությամբ տեղեկությունների հետ: Այս առումով անգնահատելի աղբյուր է ԺԳ դարի կրթական և քաղաքական գործիչ, խոշոր մտավորական ու լուսավորիչ, Սյունիքի պատմության երկի հեղինակ Առեմախոս Օրբելյանի աշխատությունը:

Օգտվել ենք նաև Եովսև Գասխտրանցու, Կիրակոս Գանձակեցու պատմություններից, Ամուռել Անեցու ժամանակագրությունից, Հովհան Եժնեցու, Մկրթաբ Ալբիվանցու, Ներսես Շնորհալու և Ներսես Լամբրոնացու գրական ժառանգությունից: Ուշագրության կենտրոնում է եղել հատկապես Քանահատ-Գլխավորում գրված կամ արտագրված ձեռագրերի հիշատակարանները, Գլխավորում իրենց կրթություն ստացած գործիչների հիշատակարանները համալսարանի տեղադրության, նրա սաների և ուսուցիչ-ուսուցչակետերի գործունեության մասին:

Որպես վիճակագրական աղբյուր են ծառայել վաղոց ծորի և հարակից գավառների վանական համալիրների պատերին թողնված բազմաթույն վիճակագրերը, որոնց մեծը հասու ենք դարձել գլխավորապես վիճակագրության խոշոր մասնագետ, բազմափորձ Ս.Բարխուդարյանի, Ս.Ավագյանի, Հո.Ջանփոլադյանի կազմած, «Իվան հայ վիճակագրության», մասնաշարից: Աշխատության շարագրման ժամանակ համախ ենք ղլմել հայ մշակույթի երախտավորներ Դ.Ալիշանի, Ե.Լալայանի և այլոց աշխատություններին: Առանձնապես նշելի է բազմամուտ բանասեր և արվեստի տեսաբան, վիճակագետ Գարեգին Հովսեփյանի՝ Գորշյան տոհմի պատմությանը և Գլխավորի համալսարանին նվիրված բազմամուղ աշխատությունը:

Մասնավորապես Գլխավորի տեղադրության հարցերին անդրազարծել են արվեստաբան Ա.Ավետիսյանը, բանասերներ Լ.Խաչերյանը, Փ.Անթափյանը, Ա.Սարխոսյանը, պատմաբան Ա.Աբրահամյանը և ուրիշներ, որոնց աշխատություններին, ուսումնասիրություններին ու հոգվածներին անդրազարծել ենք աշխատության շարագրման ընթացքում, համաձայնելով կամ մերժելով

երանց տեսակ ետները Գլածոթի համալսարանի տեղադրության վերաբերյալ:

Աշխատության նյութական մշակույթի բաժինը շարադրելիս օգտվել ենք Ն.Մառի, Հ.Օրբելու, Կ.Վաճաղարյանի, Բ.Առաքելյանի, Ա.Փալանթարյանի, Գ.Նարախանյանի, Բ.Շեղկովիկովի, Ա.Ժամկոչյանի, Ն.Հակոբյանի, Փ.Բաբայանի, Ա.Հարությունյանի, Հ.Պետրոսյանի, Հ.Ալեքոնյանի և այլոց ուսումնասիրություններից, հոգվածներից կամ առանձին հրատարակումներից ու հաղորդումներից: Անտեղծ չեն նաև հարևան և հեռավոր երկրների համապատասխան գիտնականների աշխատությունները, որոնք առնչվում են մեր ուսումնասիրության նյութին: Անձնատու նների ստուգաբանության համար, զիմել ենք օտարաբնույթ բառարանների օգնությունը:

Նյութի հավաքման և ընդհանրացման մեթոդները: 1970 և հետագա տարիներին հնագիտական պեղումներ ենք կատարել Վալոց ձորի Թառահատի վանքում, որի ընթացքում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները, Ճարտարապետական շինությունները, առանձին կառույցների զերն ու նշանակությունը, նրանց հիմնադրման ժամանակը, անունների պարզաբանումը հանդիսացել են մեր ուսումնասիրման առարկան: Վիճակի արժույթը ուսումնասիրողները, որոնք հարյուրից ավելին են, հավաքվել և ընդօրինակվել են դաշտային աշխատանքների ժամանակ: Այս մեթոդը գործնական նշանակություն է ունեցել նախկին ընթերցումներն ու վերծանությունները ճշգրտելու գործում: Հավաքված վիճակագրական նյութերի գաղափարման մեջ կիրառվել է ըստ տեղի ու ժամանակի, բնույթի ու նշանակության համախմբելու մեթոդը: Դրանք պատմահամեմատական, բանասիրական ու լեզվաբանական մեթոդների միջոցով ընդհանրացվել են մատենագրություններից, ձեռագիր հիշատակարաններից, ժամանակագրություններից լսողված նյութերի հետ: Ընդհանրացված վիճակագրական, մատենագրական, պատմաճարտարապետական նյութերի վերջնական համակարգումը կատարվել է պատմագիտական վերլուծությունների, տեսակետների, թեր և զեմ կարծիքների զուգորդմամբ:

Հիմնական վերլուծական սկզբունքները ընդմ են աշխատանքում առաջ քաշված խնդիրներից: Ըստ այդմ, հիմնական սկզբունքներ են հանդիսացել.

ա/ Մատենագրական վկայություններից ու հիշատակագրություններից արտացոլված երևույթների բացահայտումը մասնակի կամ ընդհանուրի միջոցով /մատենագրական մասնակի կամ համեմատական քննություն/:

բ/ Առանձին վիճակագրիկ փաստագրական նյութերի պարզաբանումը մատենագիր արդյունքների կամ արժանագրությունների զուգորդմամբ /մատենագրական ու վիճակագրական քննություն/:

գ/ Նյութական մշակույթի մնացորդների ուսումնասիրություն, համեմատելով համաժամանակյա հուշարձաններից հայտնի նյութերի հետ և զրանց թվագրում /պատմահամեմատական մեթոդ/:

դ/ Ճարտարապետական կառույցների և կոթողային հուշարձանների համեմատական ուսումնասիրություն և վերլուծություն /պատմաճարտարապետական ուսումնասիրության մեթոդ/:

ե/ Պատմական երևույթների, քաղաքական անցուղաբների վերլուծություն մատենագրական և վիճակագրական տեղեկությունների զուգորդմամբ /մատենագրական-վիճակագրական համեմատական մեթոդ/:

զ/ Համադրությունների միջոցով քացահայտված երողությունների իմաստավորում /պատմագիտական վերլուծության մեթոդ/:

Գործնական նշանակությունը: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժինը ու երևանի պետական համալսարանի հնագիտության ամբիոնը տարիներ շարունակ պեղումներ են կատարել և շարունակում են այդ աշխատանքները մի շարք միջնադարյան խոշոր քաղաքներում ու ամրոցներում: Առավել սահմանափակ պեղումներ են կատարվել միջնադարյան վանական համալիրներում: Այս առումով կարևոր են Վահանավանքի, Խամշի վանքի, Հին Կարբիի, Յղաց քարի վանքի պեղումները, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու այս կամ այն վանական միաբանության խաղացած դերը միջնադարյան Հայաստանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնագիտական և հոգևոր ու մշակութային կյանքում:

Մատենագրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես Վալոց ձոր գավառի, այնպես և ողջ Սյունիք աշխարհի պատմության մի շարք հարցերի պարզաբանման համար: Այն հատկապես կարևոր է Պոռչյան կամ Խաղբակյան ավառական տան ներկայացուցիչների խաղացած դերի և շինարարական գործունեության պարզաբանման համար: Միաժամանակ տվյալ հուշարձանախմբից հավաքած վիճակագրերը սկզբնաղբյուրի դեր են խաղում մի շարք իշխանական տների ներկայացուցիչների գործունեության, ժամանակի տնտեսական, սոցիալական և հարկային հարաբերությունների ուսումնասիրման համար: Աշխատության մեջ քննարկվող նյութական մշակույթը ի հայտ է եկել մեր կատարած պեղումների շնորհիվ և գիտական շրջանառության մեջ են զրկվել առաջին անգամ:

Մատենագրության մեջ քննարկվող նյութերը և զրանց հիման վրա արված եզրակացությունները գիտական հետաքրքրություն են ներկայացնում հայոց պատմության, Ճարտարապետության, վիճակագրության և նյութական մշակույթի հարցերով զբաղվող մասնագետների համար: Աշխատությունը

կարդ է հիմք հանդիսանալ միջնագործյան Հայաստանի պատմահասցիական-
 գրականության և կոնկրետ հուշարձանների վերաբերյալ պատմաճարտարա-
 պետական ուղեցույցներ ստեղծելու համար, զբոսաշրջիկությանը Հայաս-
 տանում զարգացնելու նպատակով: Միաժամանակ աշխատության մեջ քննարկ-
 ված հարցերը կոնկրետ, հեղինակի կողմից, օգտագործվում են նրանի պե-
 տական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողների համար կար-
 դացվող՝ միջնագործյան Հայաստանի հնագիտություն առարկայի դասախոս-
 ման քննացքում:

Աշխատանքի պաշտոնական հատկությունը: ներկայացված առնախոսու-
 թյունը առանձին մասերով և ամբողջությամբ քննարկվել է Երևանի պետա-
 կան համալսարանի հնագիտության մեթոդներ և ՀՀ ՊԱՀ հնագիտության և
 ազգագրության ինստիտուտի միջնագործյան հնագիտության ըստ նի նիստում:

Աշխատության մեջ քննարկվող հարցադրումները լուսաբանվել են
 հեղինակի կողմից Երևանի պետական համալսարանի և հանրապետության մի
 շարք զիտական հանդեսներում հրատարակված հոդվածներում: Ձեկուցում-
 ներ են կարդացվել դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին
 նվիրված գիտաժողովներում՝ Երևանում և Սոսիկայում: Առնախոսության
 հիմնական լուսնագիտությունը հրատարակված է հեղինակի կողմից առանձին
 գրքով որպես մենագրություն:

Աշխատանքի կառուցվածքը: Առնախոսությունը բաղկացած է ներածու-
 թյունից, երեք գլուխներից և եզրակացություններից: Աշխատության վեր-
 ճում գետնդրված են սկզբնաղբյուրների ու գրականության հարուստ ցանկ,
 ճարտարապետական հուշարձանների, զբոսայգի շահագրությունների, հայտնա-
 քերված հնագիտական առարկաների և կառույցների լուսանկարների աղյու-
 սակներ, ինչպես նաև վիմագիր բոլոր արձանագրությունների լուսանկար-
 ներ: Բոլոր արձանագրություններն ու նեն գրչանկարներ:

Աշխատանքի հիմնական ընդհանրականությունը: Առնախոսության քննար-
 ձակ առաջարկում հիմնավորված է թեմայի քննարկությունը, բնութագրված է
 նրա կարևորությունը և ձևակերպված են աշխատանքի խնդիրներն ու նպատ-
 կը: Միաժամանակ քննության է առնված պատմական այն միջավայրը, ուր
 Պոռշ խողջալսանի նախաձեռնությամբ Սևրսն Մշեցի ուսուցչապետի գլխա-
 վորությունում հիմնադրվում է Գլածորի համալսարանը: Համառոտակի մեջեր-
 վում են ինչպես Գլածորի համալսարանի, այնպես և նրա ուսուցչապետների
 մասին եղած ժամանակակիցների վկայություններն ու գնահատականները:

Բանահատի վանքի և Գլածորի համալսարանի մասին լրագրային հիշատակ-
 ված են ձեռագրաց հիշատակարաններում, ժամանակակիցների գրառումներում,
 պատմիչների աշխատություններում, վիմագիր արձանագրություններում: Առ-

կա տեղեկությունները պարզվում է, որ Բանահատի վանքի միաբանություն-
 նը գործել է առնվազն Է-ԺԷ դարերի ընթացքում, իսկ նրա համալիրում
 Գլածորի համալսարանը ղույստել է 1200-1310-ական թվականներին: Այս-
 տեղ կրթություն են ստացել բուն Հայաստանի, ինչպես նաև հիտովոյ
 Կիլիկիայից ժամանած անձինք, որոնք կատարելագործել են իրենց գիտե-
 լիքները լեզվի, պատմության, փիլիսոփայության, ճարտարապետության,
 երաժշտության, մանրանկարչության, ձեռագրերի արտագրության և գիտու-
 թյան այլ բնագավառներում:

Գլածորի համալսարանը իր գոյություն շուրջ 60 տարիների քննաց-
 քում, ալել է 300-350 շրջանավարտ, որոնք հետագայում Հայաստանի
 տարբեր գավառների վանական համալիրներում հիմնում են իրենց գիտա-
 կրթական գործընկերը և շարունակում Գլածորի համալսարանի մշակութային
 գործունեությունը:

Առաջաբանը ավարտվում է օգտագործված աղբյուրների և գրականու-
 թյան տեսություններով:

Չլուխ Ա: Գլածորի համալսարանի տեղագրությունը և պեղումները:
 Միջնագործյան Հայաստանի հոշակավոր կրթական կենտրոններից մեկի՝ Գլա-
 ծորի համալսարանի տեղագրության հարցով առաջին անգամ հարևանցիորեն
 զբաղվել են Ա.Ալիշանը և Ե.Լալայանը: Ա.Ալիշանը թեև կան ձեռն-
 գրում է, որ Վյուլուպիս վայրում կարող է եղած լինել Գլածորի հա-
 մալսարանը: Իսկ Ե.Լալայանը այն կարծիքին է, որ ,,Օրթաքենայից դեպի
 հյուսիս-արևելք՝ ձորակի մեջ գտնվում է ԺԳ-ԺԿ դարերում մեծահոշակ
 Գլածոր կամ Գլածոր մենաստանը, որ այժմ կարգված է կոչվում,,:
 Սենստուն հայազեա՝ Գարեգին Հովսեփյանը, որ ըստ առնախանի քննարկում
 է Գլածորի համալսարանի հեռ կապված ըզգմաթիվ հարցեր, ըստ էության
 գրեթե չի անդրադառնում տեղագրության խնդրին, միայն կատարում է հե-
 տեղալ եզրակացությունը. ,,Այս վանքի /Գլածորի - Ի.Ղ./ պատմություն-
 նը արթրիակ սկիզբ և վախճան ունի: Առնախոսությունից հանկարծ երևան
 է գալիս ԺԳ դարի 60-ական թվականի սկզբում իբրև Արևելյան Հայաստանի
 մասերը կենտրոն. և հանկարծ շքանում անհայտության մեջ ԺԳ դարի կե-
 սին: Անորոշ է նույնիսկ տեղը. այն ավերակները, որոնք Գլածորի մա-
 ցորդները պիտի լինեին, չեն չին են, նյութի հեռ կապ չունենցու և ոչինչ
 չլուսաբանող երկու արձանագրության բեկորներով: Եկեղեցին շինված է
 հասարակ ջարով, շրջապատում էլ չկան քնդարձակ ավերակներ, ինչպես
 ենթադրել կարելի էր վանքի մեծ հոշակից,,:

1956 թ. ,,Էջմիածին,, հանդեսում հոդվածով հանդես եկավ արվես-
 տաբան Ա.Ավետիսյանը, առավել խորամուխ լինելով հարցի քննության
 մեջ, հիմնավորեց Ե.Լալայանի տեսակետը: Սրան հետևեց ըսնասեր Լ.Խա-

չերքանի հողվածը, որը մերժելով Ա.Ավետիսյանի տեսակետը, երկշոտ մի վարկած առաջ քաշեց Գլածորի համալսարանի ավերակները ժամանակակից Գլածոր գյուղի զբոսայի տեղում փնտրելու մասին, առանց լուրջ հիմնավորման:

Այնուհետև 1967 թվականին այդ հարցին անդրադարձավ բազմաթիվ փնտրողներ Ս.Բաբխուչյանը՝ Բանաստ-Գլածորի նույնացման վերլուծի ղեկ առաջ քաշելով մի քանի նրատառումներ: Ավելի ուշ այս հարցին անդրադարձավ Ա.Գ.Աբրահամյանը ընդունելով Ս.Լալայանի և Ա.Ավետիսյանի Բանաստ Գլածոր նույնացման վարկածը:

Մշակութային այդ նշանավոր օջախի տեղադրության հետ կապված հարցերը լուսարանելու համար, երևանի պետական համալսարանի ռեկտորատի որոշմամբ, ինչպիսիք զբոսայի, պեղումներ սկսել և պարզել Գլածորի համալսարանի ստույգ տեղը: Այդ նպատակով համալսարանի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնը 1969 թվին կազմակերպեց արշավախումբ, աղբյուրի հեղինակի ղեկավարությամբ՝ ուսումնասիրելու մասենագրական աղբյուրներում, պատմագիտական ու ընտանիքական ուսումնասիրություններում և փնտրելու արձանագրություններում եղած ընդ որ այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Գլածորի համալսարանին և կարող են նպաստել որոշելու, թե որտե՞ղ է գործել համալսարանը, ինչպես նաև այդ նպատակով հնագիտական պեղումներ սկսելու առավել հավանական համարվող հնավայրում:

Մասենագրական աղբյուրների ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

1. Գլածորի համալսարանը 1282-1291 թվականների ընկնացքում՝ երկու անգամ հիշատակվում է Աղբեքը վանք անունով: 2. 1291-1302 թթ. ընթացքում՝ Աղբեքը վանք և ,,Մականուն Գլածոր,,: 3. 1302-ից հետո գերազանցապես՝ Գլածոր, Գալլածոր, Գիլածոր, Գելածոր անուններով: 4. Գլածորը հիշատակվում է սբ.Ստեփանոս վանքին կից, ուր թաղվել է 735 թ. Մոզ ավանում պահված Սյունիքի Ստեփանոս եպիսկոպոսը: 5. Գլածորի վանական կենտրոնի գլխավոր եկեղեցիները կոչվել են սբ.Ստեփանոս /Ստեփանոս Նախավայրի և Ստեփանոս Սյունեցու անուններով/ և սբ. Նշան: 6. Ըստ Գլածորի սաների հիշատակարանների, Գլածորի զվարճը և վանքը ոչ թե ձորի մեջ էին, այլ՝ ,,քարձրադրակ մենաստան Գլածոր, որ յանհմուտ եւ գնուտ արանց Գալլածոր ասի,,: 7. Ստեփանոս Օրբելյան պատմիչը, որը իր իսկ վկայությամբ սովորել է Գլածորի զվարճում, ,,Պատմութիւն նահանգին Սիսական,, երկում չի հիշատակում ոչ նրա ստույգ անունը և ոչ տեղը: 8. Գլածորի համալսարանը տեղավորված է եղել Գողշյան ավասական տան տիրույթում և նրա ծախսերի հիմնական

մասը հոգացել են Գողշյանները: 9. Եվ, վերջապես, ինչպես Գ.Հովսեփյանն է նկատել, 1280-ական թվականներից վանքը հանկարծակի հառնում է իր մեծ համբավով, և նույնպիսի հանկարծակիություններ էլ 1340-ական թվականներին անհիշելի դառնում:

Արշավախումբը 1970 թ. մայիս-հունիս ամիսներին մի քանի անգամ այցելեց վանք ձոր, տեղադրություններ և հետախուզական պեղումների օգնությամբ ծանոթացավ Գլածորի համալսարանի տեղադրության հնարավոր հնավայրերին: Առաջին հերթին հետազոտման ենթարկվեց Դ.Ալիշանի և Գ.Հովսեփյանի նկարագրած վայրը: Պարզվեց, որ այստեղ պահպանված ավերակները որևէ առնչություն չեն կարող ունենալ Գլածորի համալսարանի հետ: Տեղում պահպանված շինությունները հասարակ բարեկենս, անշարժ շարված և ըստ ճարտարագետ Ս.Սաթևոսյանի, քրիստոնեական վաղ շրջանի կառույցներ են: Երջարատում չկա աչքի ընկնող հուշարձան, նույնիսկ դրա համար տեղ չկա: Հրավարվելով վերգտնայա ուսումնասիրությունները, արշավախումբը սկսեց հետախուզական պեղումներ կատարել հնավայրում: Այդ վործը ևս ավարտվեց անարդյունք:

Ս.Բաբխուչյանի և Լ.Խաչերյանի մտանշան վայրերից նույնպես որևէ օգտակար նյութ չհայտնաբերվեց: Վերնաշինում, որը սվյալ ժամանակաշրջանում Գողշյանների իշխանական նստոցն էր, եղել են սբ.Հակոբ և սբ.Գևորգ անուններով եկեղեցիներ, մինչև 19 Գլածորի վանք-համալսարանի եկեղեցիները սբ.Ստեփանոս և սբ.Նշան անուններն են ունեցել: Համալսարանը այժմյան Գլածոր գյուղի տարածքում նույնպես չէր կարող լինել, որովհետև այստեղ պահպանված 1311 թ. մի փնտրող լաշարձանի համաձայն, այդ տեղանքը պատկանել է ոչ թե Գողշյաններին, այլ Օրբելյան տոհմի կիսաբիթայան Մյուրի Զեսար իշխանի շահավորներին: Այդ հիշատակագրում ասված է. ,,24: / = 1311 թ./ իշխանութիւն պարոն Զեսարին, կամաւն Աստուծոյ ամենակալին եւ՝ վարդաշահ, կանգնեցի վեաջս յիշատակինձ եւ ծնողաց իմոց: Ով կարգէք, աստուած ողորմի ասէք,,: Հանրահայտ է, որ Գլածորի համալսարանը գտնվում էր ոչ թե Օրբելյանների կամ նրանց վասալների, այլ Գողշյանների տիրույթում:

Ի վերջո, որոշվեց պեղումներ սկսել Ս.Լալայանի և այլոց ենթադրած հնավայրում՝ վերնաշին գյուղից 5-6 կմ հյուսիս-արևելք գտնվող Բանաստի կամ Բանաստի վանական համալիրի մերձակայքում, հիմք ընդունելով հետևյալը. 1. Տեղում կիսակահագուստ փնտրվում պահպանվել են սբ.Ստեփանոս և սբ. Նշան եկեղեցիները: 2. Բանաստում է թաղված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը, իսկ ըստ աղբյուրների Գլածորի եկեղեցին նույնպես նվիրված էր սբ. Ստեփանոսի հիշատակին: 3. Վանքը կառուցված է մի ընդարձակ կոնալանջի քարձուռքին և ինչպես աղբյուրներն են վկայում

„քարճրագրակ,, է: 4. Վանքի շրջակայքում բացի եկեղեցիներից նկատելի էին ըստմանով խաչքարեր, գերեզմանաքարեր, մահարձաններ, ճարտարապետական հուշարձաններ սրբատաշ մանրամասներ, հին շինությունների ինչպես ամրոցակերտ, այնպես և ավերված ու կիսակերտ մնացորդներ:

5. Բանաստի համալիրի սարածքից Ս.Բարխուդարյանը հավաքել ու հրատարակել է 62 վիճակի արձանագրություն, որոնք փոքրոված են եկեղեցիների գատերին, գերեզմանաքարերի վրա, խաչքարերի մակաօրին, շինարարական մանրամասների վրա և այլուր: Մեր պեղումներով հայտնաբերվեց ևս 50 նոր արձանագրություն: Չեռնակելով Բանաստի վանքի համալիրի պեղումները, մենք նկատի ունեցանք մի հանգամանք ևս. Գլածոցին վերաբերող նյութեր չգտնելու պետքում էլ պեղումները կ'երաստին հոբբի լուծմանը, քանի որ կատվածի երեսին համալիրների քանակը կրակասեց մեկով:

Բանաստի մասին ամենահին տեղեկությունը վերաբերում է 705 թվին կրք Եղ ախումում սպանված Ստեփանոս եպիսկոպոսին ընկում են ու թաղում ալսուղ: Երարանները սկզբում նրա գերեզմանի վրա կառուցում են մատուռ, իսկ 1273-1279 թթ. զմբկթահարի հոբինվածքով եկեղեցի, ըստ Օրբելյան պատմիչի: Այժմ կանգուն եկեղեցին /կտ. 127. թ./ արտաքուսա բռանվունի, ներքուսա խաչածե կառույց է, որն ունի երկուսական փոքրիկ ավանդաններ արևելքից և արևմուտքից: Բացի այդ, արևելյան կողմում, երկտրդ հարկում, այն ունի երկու լրացուցիչ ավանդան, որոնց մուտքերը բացվում են ընդի վրա: Ըստ արձանագրությունների եկեղեցին կոչվում է „յարկ սրբուն Ստեփանոսի,, ,,սր.Ստեփանոսի գերեզման,, ,,Բանաստի վանք,, և այլն:

Սր.Ստեփանոսի հյուսիսային կողմում կցակառուցված է մեկ այլ կամաչակազ ծածկով շինություն, որը ծռուսվել է իր ըն մատուռ-գավարանի հասգանվել են մուտքը և արևմտյան ու հյուսիսային պատերը: Արձանագրություններում այն կոչվում է սր.Նշան: Մատուռը կառուցվել է սր.Ստեփանոսից հետո, ըստ ոչ ոչ քան 1302 թիվը, քանի որ այդ թվականից զբիշները հիշատակում են սր.Նշան Բանաստ-Գլածոց հուշարձանախերի մեջ: Հիշյալ կառույցներից բացի տեղում որեէ սրբատաշ շենքի հեարեր չեն երևում: Գերեզմանատան թվակիր ամենահին արձանագրությունները վերաբերում են 1215, 1218, 1246 թվականներին:

Ոռաջին հերթին սկսեցինք պեղել սր.Ստեփանոս եկեղեցու հարավային կողմի ընդարձակ հարթ սարածքը, որտեղ հողի մեջ կիսով չափ թաղված խաչքար էր երևում: Այս հատվածում բացվեց սարքեր ժամանակներում կառուցված ըստմանույժ շինությունների մի ամբողջական համալիր, ընդ որում՝ ըստիլի ոճի մի եկեղեցի, նրան կից հինգ առանձին աշխատասենյակ-իցեր, զավիթ, անաստան կառույցներ, տաղանաքարեր և այլն: Մեզ

հաջողվեց պարզել շինությունների կառուցման և վերանորոգումների ժամանակները, որոնք տեղում շատ որոշակի հետախույզ են, կամ վիսվում վիճակի արձանագրություններով: Որոշ չափով պարզեցինք նաև նրանց նախնական և հետագա նշանակությունները:

Նոքահայտ եկեղեցին ըստանվունի ըստիլի զահլիմ է՝ կառուցված հիմնադրմանի վրա: Այն հարավային և հյուսիսային կողմերում ի սկզբանե ունեցել է մեկական ավանդատուն: Թե զահլիմը, և թե խորանները ունեցել են իրենց ընկերը և վեմաքարերը, որոնք տեղում պահպանվել են: Եկեղեցին ունեցել է միայն մեկ մուտք արևմուտքից, իսկ խորանների հետ հարաբերակցվել է եկեղեցու ներսից՝ համարապատասխան պատերի մեջ բացված դռներով: Պեղումների ժամանակ գտնված ճարտարապետական մանրամասները հնարավորություն տվին կառույցը թվագրելու ն-է զարեքով: Նորաբաց ըստիլիկան ըստ ամենայնի Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Բանաստի վանքի հնագույն եկեղեցին է: Պեղումները պարզեցին, որ այդ կառույցը ավերվել է ՅԱ-ՅԲ զարերի ընթացքում, իսկ վերանորոգվել է 1215 թ. Վասակ Խաղբակյանի կողմից, ըստ հետևյալ արձանագրության.

„ի թվիս :ԲԵԳ: / = 1215/ վերասին նորոգեցաւ սուրբ եկեղեցիս, յոռաշ-նորոգութեան հաւր Ստեփանոսին, հրամանաւ աստուածածակի թշխանին Վասակայ, որ զուր խաղբակայ: Յի էն տաղալ եալ յարևորի նագ: Եւ սո շատ շարչարեալ արեամբ չափ, ազատաց գեկեղեցիքս՝ իւր կոցարամն: Եւ մտաբանց սուրբ ու խախ կարգեցին զփոխման աստուածածակին :Գ: աւր զամէն եկեղեցիք...::

Վերակառուցման ժամանակ հարավային պատի մեջ բացել են մի մուտք, որով կենարոնական զահլիմը հարորդակեցվել է նորակառույց բանանուների հետ: Հյուսիսային պատի ամբողջ երկարությամբ, մինչև հնագույն խորանը, ավելացվել է մեկ այլ բանանուներ, որի մուտքը արևմուտքից է: Նման երկու խորան կառուցվել է նաև հարավային կողմից: Թաղիլիկայի հարավ-արևելյան կողմին կից բացվեցին ինչ-որ կառույցի, համանաբար փոքրիկ մատուռի մնացորդներ: Այն շարված է եղել հարավային կարմրավուն հսկա քարերով, որոնցից տեղում պահպանվել է միայն երկու-երեք քար: Ննթարում ենք, որ սույն կառույցը պետք է Ստեփանոս Օրբելյանի հիշատակած փոքրիկ մատուռը լինի՝ կառուցված 705 թ. Ստեփանոս եպիսկոպոսի ամյունը ամփոփելու համար. ,,... Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի,,:

Նոքահայտ կառույցի նկարագրությունը կամբողջանա, եթե հիշենք, որ հյուսիս-արևելյան խորանի մեջ հարավային պատի տակ, ընդի առաջ հայտնաբերվեց անհայտ անձնավորության անարձանագիր տաղանաքար, որը իր կառուցողական արվեստով և ոճավորմամբ նման է ՅԳ զարի առաջին կե-

սին պատկանող Բլակիր սաքանաքարերին: Բազիլիկ և սր.Ստեփանոս եկեղեցիների միջև քնկած սարածութունը պեղելիս բարձրեց, որ բազիլիկային հնազանդում կցակառուցվել է երեք բաժանմունք ունեցող, կազմաաշարքերով շարված մի կառույց, որի մեջ հայանաբերվեցին մեծ չափերի բոնիբներ, բազալտ քարից պատասխած խճուղի աշտ, սանդ ու նյութական մշակութային սլ մնացորդներ: Ելնելով համապատասխան նյութերից և կառուցողական ու հասակագծային առանձնահատկություններից, այն վանական միաբանության համար ծառայել է իր անտեսական նշանակություն ունեցող կառույց:

Բազիլիկայի արևմտյան կողմում բացվեցին ԺԳ դարում կառուցված զավիթի հիմնադասեր, իսկ հասակին բազմաթիվ սաքանաքարեր, որոնց մի մասը ունի համապատասխան արձանագրություն:

Արշավախուժըն ուսումնասիրեց նաև սր.Ստեփանոս և սր.Նշան եկեղեցիների շրջապատը և ներքը: Սր.Ստեփանոս եկեղեցու արևելյան պատի սակ, կողք-կողքի տեղադրված են տասը սաքանաքար՝ Ծարսաբազմասկան սաքարեր հորինվածքով, որոնցից հինգը ունեն համապատասխան արձանագրություն: Սր.Նշան մատուռ-զամբարանի մեջ սկզբնապես եղել է վեց սաքանաքար, որոնցից չորսը ծամանակին ունեցել են արձանագրություններ, ըսյց քարի վառ որակի պատճառով /բաց վաղազույն Ֆելզիա/ բոլորն էլ եղծվել են և զարծել անթիվունելի: Նկարագրված կառույցների արևմտյան կողմում ոցոշ խորություն վրա բացվեցին զավիթի հիմնադասերի մնացորդները: Նրա հասակը պատահ էր սաքանաքարերով /Բվով 24/, որոնցից միայն չորսի վրա է պահպանվել համապատասխան հիշատակագրություն:

Ուսումնասիրվեցին նաև հուշարձանախմբից 40-50 մետր հյուսիս-արևմուտք գտնվող մի կառույցի ավերակները: Այն տեղադրված է արևելք-արևմուտք ուղղությամբ, ունի միայն մեկ մուտք արևմուտքից: Պատերի պահպանված մասերի ընդարձությունը 80-110 սմ է: Կառույցն ընդգրկում է շուրջ 100 քառ. մետր սարածություն: Պեղումների շնորհիվ բարձրվեց, որ սույն կառույցը պատկանում է ԺԳ-ԺԴ դարերին: Ենկը կառուցված է տեղական մեղրված կիսամշակ բազալտ քարով, միայն առանձին դեղքերում, հասկապես անկյունային մասերում հանդիպում են մշակված մեծ քարեր: Հասակը ճեղքածակ է: Պատելով կառույցի ընդհանուր հասակագծային ու կառուցողական առանձնահատկություններից և չափերից, կարելի է ենթադրել, որ այն իր ծամանակին ծառայել է միաբանության համար իր ան ժողովարան, սեղանատուն: Հեռագա՝ ԺԵ-ԺԶ դարերում, երբ Բանաստի վանքի միաբանությունը կրճատվում է և այլևս նման խոշոր կառույցի կազմը չունենին, տեղացիներն այն վեր են ածում անտեսական շինություն: Այդ է վկայում ինչպես կառույցի ներսում, այնպես և նրա հյուսիս-արևելյան

արտաքին անկյունում խորված անտեսական հորերի ավազուլությունը: Բանաստի հուշարձանով մեր մեկնակալը ում պահպանվել են սրբատաշ քարեր, քնակելի տներ, անտեսական շինությունների բազմաթիվ մասցորդներ: Ներ արշավախմբի հեռագրություններից բարձրվեց, որ այդ անտեսական շինքերն ու քնակաշանները կառուցված են կղել Բանաստի /Գլածորի/ զարծու նույն ժամանակ շրջանում՝ ԺԳ-ԺԴ դարերում: Հնասագյում, ԺԷ-ԺԸ դարերի քնակալում, կըր հնախալի սարածքը քնակացվում է մահմեդականներով, Բանաստի վանքան կենտրոնի շինություններից շատերը վերավորվում և օգտագործվում են: Նորարեակները վանքի շրջապատում եղած ավերակները հարմարեցնում են իրենց կարիքներին՝ որ ոչ զեղքերում չխաթարելով քնակելի կառույցների նախնական հասակաճը և կառույցների հորինվածքը: Միաժամանակ տները վերաշինվելիս նրանց լայնարևն օգտագործել են ինչպես հասարակ ու շինված շինարար, այնպես էլ ավերված հուշարձանների մշակված քարերը, նույնիսկ ածանազրվածները: Ստեղծված իրավիճակում զեղք է որոշակիորեն առանձնացնել ԺԳ-ԺԴ և ԺԵ-ԺԸ դարերի քնակելի տները իրարից, մի իրողություն, որը զմվարացնում է ուսումնասիրողի աշխատանքը:

Բանաստի վանական համալիրի մեջ առնվազն երեք հոգևոր կառույց է մտել, և յուրքանչյուրն ունեցել է իր անունը: Դրանցից երկուսը արձանագրություններում հիշվում են՝ Ստեփանոս եպիսկոպոսի և սր.Նշանի անուններով, իսկ կրքերի տները չի հիշվում: Ե-Ը դարերի նորահայտ բազիլիկ եկեղեցու անունը վերականգնվում է: Օրբելյան կաթարխ իշխանի որդիների անունով բողած նորահայտ վիմազիր արձանագրությամբ: Ահա այդ նորահայտ վիմազիրը մեր վերծանությամբ.

„Կամու Աստուծոյ աս մեր գիր է կաթարխի: Ուստեղ՝ Սմիլասա, Փախրազուլի, Տարսալիմի որ ողորմութեամբ Աստուծոյ ավար գիւմնտ շաղացս, որ Մշտակածոր, :Ա: հողն զբան շաղացին՝ եւ Բանաստ վանք սուրբ Ստեփանոս զրեցին :Ե: աբ պատարագ սուրբ Սարգսի սուկին, ::

Արձանագրության մեջ հիշատակված անունները կաթարխ Օրբելյանի չորս որդիներն են: Նա ունեցել է հինգերորդ որդի ևս՝ Ելիկում, որը մահացել է 1255-55 թթ. միջև: Կնշանակի արձանագրությունը գրված է 1255-ից հետո, երբ կենդանի չէր Ելիկումը, որի անունը չի հիշատակվում: Իսկ փորագրման հնաբալոր վերջին ծամանակը վերա է ոլոշենը իվանի և Փախրազուլայի կենդանության սաբիներով: Նրանք մահացել են, ինչպես վարդ է աղբուրներից, մինչև 1261 թվականը: Հեռաքար ածանազրությունը փորագրվել է 1255-1260 թվականների միջև, գեոևս չորս եղբայրների կենդանության օրոք: Այս եղբայրացությանն ենք հանդում, որովհետև առաջին տողում խոսքը չորս եղբայրների մասին է, իսկ վերջում

հինգ պատարագ են պատվիրում, հավանաբար մեկական յուրաքանչյուր եղբոր համար:

Արձանագրութեան բովանդակութեանց նաև հետևում է, որ 1273 թվին կառուցված սբ.Ստեփանոս եկեղեցուն կիսարկա Օրբելյանի չորս որդիները չէին կարող նվեր առ 1255-1260 թվականների ընթացքում: Մտում է մտածել, որ այդ թվերին թանահատում կար սբ.Ստեփանոս անու- նով մեկ այլ եկեղեցի ևս: Այստեղից հետևում է, որ բազիլիկ եկեղե- ցին նույնպես կոչվում էր սբ.Ստեփանոս: Միանգամայն տրամաբանական է այն ենթադրությունը, թե Ե-է զարկերում կառուցված բազիլիկ եկեղեցին սկզբնապես նվիրված է եղել Ստեփանոս նախավկային, ուստի 735 թվին այդ նվաստ ունեին հոգևոր իշխանությունները, երբ Արկազի սբ. Խաչի վանքից Ստեփանոս Սյունեցու աջուկը անդամորդում էին Թանահատի վանք: Այսպիսով, 1. Թանահատի վանքի եկեղեցիները նվիրված էին Ստեփա- նոս նախավկային, Ստեփանոս Սյունեցուն և սբ.Նշանին: Այդ նույն ա- նուններն ունեին Գլածորի համալսարանի հոգևոր կենտրոնները: 2. Աղ- բերց վանք Գլածորը, Մաթեոս Կրկեցու վկայությամբ, հուլյ է շիրի- մբն Սյունեցի, 3. իսկ Սյունեցու շիրիմը Թանահատի վանքում է: Կնշանա- կի Աղբերց վանքը Թանահատն է: 3. Ստեփանոս Սյունեցու անունը կրող եկեղեցու արևելյան պատի տակ, արտաքուստ, բացվեցին տասը տապանաքա- րեր կողք-կողքի, որոնցից հինգի վրա եղած հիշատակագրերում հիշվում են Գլածորի համալսարանից մեզ հայտնի ուսուցիչ-ուսուցչապետերի ա- նունները, որոնք իրենց ժամանակով միանգամայն համբնկում են: Գրան- ցից են Գավիթը, Գրիգորը, Սարգիսը, Ստեփանոս աբեղան, մյուս Սարգիսը և այլն: 4. Ներսես Նշեցին, որ մահացել էր 1284 թվին, մեր ենթա- դրությամբ ձեռք է, որ թաղված լիներ սբ.Նշան մատուռ-զամբարանում: Բայց ինչպես ցույց տվեցին գեղումները, մատուռի ներսի տապանքարե- րը բարբեր պատմաներով ոչնչացվել են ու հիշատակագրերը եղծվել: 5. Առավել հետաքրքրական ու կարևոր է նախի Նշեցու տապանքալի հարցը: Պատիշները և ձեռագիր արագրող գրիչները միաբերան հաստատում են, որ նախի Նշեցին թաղվել է Գլածորի վանքում: Բայց գեղումներով Թանա- հատում նրա անունով տապանքար չի հայտնաբերվել: Չնայած այդ հանգա- մանքին, այնուամենայնիվ, հնարավոր է նախի Նշեցուն վերագրել սբ. Ստեփանոս նախավկայի անունը կրող եկեղեցու հյուսիս-արևելյան խորանի մեջ բացված առանց հիշատակագրի տապանքարը: 2է՞ որ հայկական եկեղե- ցու կանոնադրբերից մեզ հայտնի է նաև այն իրողությունը, ըստ որի ար- գելվում էր եկեղեցու ներսում թաղումներ կատարելը: Ասկայն գործող այս կարգից իստ բացառություն էր արվում միայն այն անձնավորություն- ների համար, որոնք իրենց կենդանության ժամանակ ձեռք էին քիչում համազգային մեծ համբավ և հեղինակություն՝ դասվելով սրբերի շարքը:

Այդպիսի մարդկանց թվին են պատկանել Սեպուղ Մաշտոցը, Հովհաննես, Գայանեն, Միքիթա Գոշը, Վանական վարդապետը, վարդան Արևելցին, Գրի- գոր Տաթևացին և ուրիշներ: Վերը շարադրվածից սրբուք չի՞ հետևում, որ մենք իրավացիորեն կարող ենք այդ առանց արձանագրութեան տապա- նքարը վերագրել Գլածորի համալսարանի անվտանգիներին ըստույնապես, իր ժամանակի գիտական, կրոնական և աշխարհիկ հարցերում խոշոր զեղ լազա- րած, անուրանալի ծառայությունների տեր, ժամանակակիցների կողմից բարձր գնահատված և սրբերի շարքը դասված նախի Նշեցին:

Այսպիսով, պարզվում է, որ Թանահատի վանքի բազիլիկ եկեղեցին, որ կրում էր սբ.Ստեփանոս նախավկայի անունը, ԺԱ-ժԲ զարկերում ավեր- վել էր օտար նվաճողների կողմից և 1215 թվին վերակառուցվում է վա- սակ խաղաղությանի հրամանով ու վանքի առաջնորդ Հայր Ստրիավակի ղեկա- վարությամբ: Այս եկեղեցին իր հիմնական նշանակին ծառայեց հավանաբար մինչև 1279-1280 թվականները: Նրա կողքին, Գոռը նեծ իշխանը 1278- 1279 թթ. կառուցել ավեց սեկ այլ եկեղեցի Ստեփանոս Սյունեցու անու- նով: Հենց այս նոր եկեղեցին իր վրա վերցրեց հոգևոր կառույցի հիմ- նական զեղը, իսկ բազիլիկ եկեղեցին 1270-ական թվականների վերջին ոմն ինչաշահի կողմից ենթարկվեց նոր վերակառուցման, արդեն ընդորո- վին այլ նպատակների համար: Այդ մասին իմանում ենք համապատասխան վիմագիր արձանագրությունից:

Բազիլիկ եկեղեցին, որ 1280-ից հետո կորցնում է հոգևոր կենտրո- նի իր նախին զեղը, նրևում է նաև այն բանից, որ նրան հյուսիսային կողմից կցակառուցում են անտեսական նշանակություն ունեցող մի այլ շինություն: Այս հանգամանքը իստ բացառություն պիտի համարել հայ- կական միջնադարյան վանական կառույցների ճարտարապետության պատմու- թյան մեջ: Նման բացառություն կկատարվեր միայն այս դեպքում, եթե ավալ կառույցը կորցնեք եկեղեցի լինելու իր հիմնական նշանակություն- նը, մի հանգամանք, որ հաստատում է մեր առջ քաշած տեսակետը:

Այս շրջանին են վերաբերում նաև բազիլիկ եկեղեցու հյուսիսային և հարավ-արևելյան կողմում կցակառուցված ավանդատների նման տալքեր մեծություն ևս երեք կառույցներ: Ավանդատների զոյությունը չէ, որ մեր ուշադրությունը գրավում է, այլ այն, որ հարավ-արևելյան և հա- րավ-արևմտյան ավանդատների միջև զանդող ազատ արածությունը նույն- րև օգտագործված է, որպես խորան-ավանդատուն: Հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ այս հանգամանքը նույնպես նոր երևույթ էր, ո- րը նախորդ և հետագա դարերում չի հանդիպում: Ուրեմն սա էլ երկրորդ բացառությունը, որ մեզ հիմք է աւելիս գնդելու, որ բազիլիկան ԺԿ զա- րի 80-ական թվերին կորցրել էր եկեղեցի լինելու իր նշանակությունը:

Մեր զամ արձանագրութիւնները, քացի վերակառուցման մասին հիշատակող արձանագրութիւնից, վերաբերում են սբ.Ստեփանոսին և սբ.Նշանին, և՛ ոչ մի տող հնագույն քաղիկիայի և նրա անվան մասին: Սա նույնպէս ուշադրութեան արժանի դասա է: Այս բոլորի հետ միասին մանակ քաղիկի եկեղեցին մինչև իր ավերակը պահպանում էր կրօնական կառուցին բնորոշ առանձնահատկութիւններ, այսինքն ավագ սեղան, յուրաքանչյուր խորանում՝ բևե և վիմարար, քաղմբիկ խաչքարերի գոյութիւն, եկեղեցու առաջ զավիթի կառուցում և պլան: Դա նույնպէս բնորոշ էր միջնադարյան ուսումնական նպատակների համար հարմարեցված շինութեանը, որովհետև դասավանդումը կատարվում էր հոգևորականների կողմից, և ավերողներից շատերը գտնուում էին հոգևոր գործիչներ:

Այսպիսով, կարելի է ազգացուցված համարել, որ հայտնաբերվել են Գլաձորի համալսարանի ավերակները, և որ համալսարանի շինքը ԺԳ-ԺԴ դարերում մտել է Բանաստի վանական համալիրի մեջ ու կազմել նրա անբաժան մասը:

Գլաձորի համալսարանի գործունեութեան զարգացումից հետո Բանաստի վանական կենտրոնը աստիճանաբար կորցնում է իր հեղինակութիւնը և ԺԵ-ԺԸ դարերում դառնում շատ սովորական մի վանական միաբանութիւն: ԺԸ-ԺԷ դարերում գոյութիւն ունեցող անկախ ունեցող անկախ քաղաքական վիճակը, Հայաստանին տիրելու համար մղվող թուրք-պարսկական շարժարտը պատերազմները, Շահ Աբասի 1604-1605 թթ. կազմակերպած մասսայական զինվորութիւնը Բանաստի վանքի ամայացման պատճառ դարձան: Միաբանութիւնը ցրվեց կամ զերկուսովեց, շինութիւնների մեծ մասը վերածվեց զլանակների: Դրա հետևանքով էլ հետագա դարերում քնակչութեան կողմից մոռացվեց Գլաձորի համալսարանի և անունը, և տեղագրութիւնը: Բանաստի վանքը մնաց լքակ վիճակում մինչև ԺԸ դարը, երբ այնտեղ քնակչութիւն հաստատեց թուրքալեզու մահմեդական եկվոր քնակչութիւն: Այդ ժամանակ էլ զոխվում է վանքի անունը՝ ելնելով շինարարի սև գույնից, այն վերանվանվում է ,,Կարախանք,, /Սև վանք/: Այդ անունով էլ Բանաստի վանքը հայտնի դարձավ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի հետևանքով վայոց ձոր զաղթած պարսկահայ քնակչութեանը:

Վանքի իրական անունը՝ Բանաստ, վերականգնվեց տեղագրագետ ուսումնասիրողների ջանքերով, իսկ մեր պեղումները ավելի հիմնավոր դործքին այն անսովոր, որ այնտեղ է գտնվել Գլաձորի հուշակալի համալսարանը:

Գլուխ Բ. Պեղումներով հայտնաբերված հնագիտական տարիակները: Բանաստ-Գլաձորի հուշարձանախմբի պեղումների քննարկում համեմատաբար շատ քիչ նյութեր են գտնվել, երևի համեմատելու լինենք միջնադարյան

Հայաստանի այնպիսի քնակչութեան հետ, ինչպիսիք են Գլուխ, Արին, Գառնին, Լոռին, Անգեղղը և այլն: Մի կողմից զսկզբից է քայքայել տեղի քնակչութեան /միաբանութեան/ ժուժկալ կյանքով ու առանին իրերի նկատմամբ նրանց ունեցած ոչ մեծ փասանջարկով, մյուս կողմից այն հանգամանքով, որ Բանաստ-Գլաձորի միաբանութիւնը հանկուրդով չի լքել վանքը և հետագայ այն տեղից, որպեսզի նրա օգտագործած առարկաները տեղում անխախտ մնային: Կյանքը այնտեղ մահացել է զանազորեն: Ուստի նրանց օգտագործած պիտանի իրերն էլ, կամ տեղադրվել են այնտեղից հեռացանքի կողմից, կամ շարքից գուրս գալով գեն են նետվել ու անհետ կորել մեզ համար: Զեռք է անտեսել նաև, որ միաբանութեան ցրվելուց հետո, ԺԸ-ԺԹ դարերի քննարկում այնտեղ քնակչութիւն է հաստատել Թրքալեզու մահմեդական քնակչութիւն և ավելանութիւններով ու թալանով ի չիք դարձրել լուրջ ու պիտանի առարկաներ գտնելու մեր հուշները:

Այնուհանդերձ, պեղումների քննարկում ի հայտ եկած հնագիտական առարկաների ուսումնասիրութիւնը որոշակի նպաստ կարող է բերել Բանաստ-Գլաձորի վանական կենտրոնի և քարձրագույն դպրոցի պատմական կյանքի տարեգրութեան ու կառուցապատման զրկագները վերականգնելու համար: Դրանց ուսումնասիրութիւնը կնպաստի նաև զարգելու միաբանութեան առարկան կամ փոխանկայի կապերը հարևան և հեռավոր խոշոր արհեստագործական կենտրոնների հետ:

Անհամուր զծերով աշխատութեան մեջ քննարկում ենք հնագիտական իրերի բնութագիրը, համեմատութիւն անցկացնում միջնադարյան Հայաստանի մյուս հնավայրերի համեմատն նյութերի հետ, փորձում ենք ըվագրել, պարզել արապրութեան տեղը և ժամանակը, երբ զս հնարավոր է:

